

ՊՐՈՌԱՑԻԱՅԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Ուսումնասիրություն

**ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ:
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

Մաս առաջին

Երևան 2020



Ուսումնասիրությունը հայերեն հրատարակություն է, որը կատարել է «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացվող «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրության բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմյայն «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությանն են և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության տեսակետներին:

Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում: Գործունեության օրենսդրական հիմքերն ու հիմնական մարտահրավերները. մաս 1/ Հասմիկ Հարությունյան

—Եր.: Հելսինկյան ասոցիացիա 2020.— 61 էջ:



Սույն ձեռնարկը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի՝ **«Քաղաքացիական հասարակություն» (ԶՀ)** թեմայով: Շարքն ընդգրկում է գրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

Քննադատական մտածողություն (ՔՄ)

Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)

Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)

Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 7 ՆԱԽԱԲԱՆ
- 12 ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐՆ
ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
- 16 ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ:
ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ
ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ
- 23 ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ
ԸՍՏ ԶՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՓՈՒԼԵՐԻ
- 24 Այլընտրանքային խափանման միջոցները
- 30 Անվտանգության միջոցներ
- 33 Պրոբացիայի ծառայության գործառույթները
պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատի-
ժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատե-
լու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու
գործընթացներում
- 37 Վերասոցիալականացմանն ուղղված գործա-
ռույթներ
- 39 Էլեկտրոնային վերահսկողություն

- 47 ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
- 50 ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ
- 53 ԱՄՓՈՓՈՒՄ: ՀԻՄՆԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ
- 56 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 58 ABSTRACT
- 59 ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ



ՆԱԽԱԲԱՆ

2016 թ.-ի մայիսի 17-ին Հայաստանի Հանրապետությունն ընդունեց «Պրոբացիայի մասին» օրենքը, որով երկրում հիմք դրվեց պրոբացիային, և ստեղծվեց քրեակատարողական ծառայությունից անկախ պրոբացիայի ծառայություն: Այս ինստիտուտի ներդրումը պայմանավորված էր երկրում քրեական արդարադատության ոլորտում պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցնելու անհրաժեշտությամբ: Հանցանք կատարած անձանց վերականգնումն ու սոցիալական վերաինտեգրումն առաջնային նշանակություն ունեն այս գաղափարի համատեքստում:

Օրենքի ընդունումից ու ծառայության գործունեության մեկնարկից ի վեր, սակայն, Պրոբացիայի գործունեության գնահատում, որպես այդպիսին, չի կատարվել, չեն ուսումնասիրվել ոլորտի օրենսդրական հիմքերն ու դեռևս կարգավորում պահանջող հարաբերությունները: Ծառայության գործունեությունը չի գնահատվել նաև պրակտիկայում, ինչը հնարավորություն կտար գործարկման առաջին իսկ տարիներին նախանշելու հիմնական ռիսկերն ու մարտահրավերները:

Չնայած Պրոբացիայի ծառայությունը հանրությանն ու ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացնում է իրականացված աշխատանքների վերաբերյալ պարբերական հաշվետվություններ¹, սակայն դրանք բովանդակային չեն և որակական տվյալ-

1 ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պաշտոնական կայք, 2020 թ. <http://probation.am/en/vichakagrutyun-hashvetvutyun>

ներ չեն պարունակում, չեն գնահատում արդյունավետությունն ու հնարավոր ռիսկերը: Ոլորտի վերաբերյալ իրականացված առավել համապարփակ ուսումնասիրություն թերևս կարելի է համարել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ ՀՀ պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկումը և դրա արդյունքներն ամփոփող 2018 թվականի զեկույցը²: Այն արձանագրել է, որ չնայած օրենսդրության մեջ ամրագրվել է վերականգնողական արդարադատության գաղափարը, սակայն դեռևս լուրջ քայլեր պետք է ձեռնարկվեն դրա պրակտիկ կիրառելիությունը պատշաճ ապահովելու համար:

Վերոնշյալի համատեքստում հուսադրող են ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թթ.-ի ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2023 թթ.-ի միջոցառումների ծրագիրը, որում ներկայացված են ոլորտի հիմնախնդիրներն ու բարեփոխումների ուղենիշները: Մասնավորապես, որպես բարեփոխումների առաջնային ուղենիշ, ի թիվս այլնի, նշվում են օրենսդրական դաշտի կատարելագործումը, գործող ակտերը միջազգային իրավական չափորոշիչներին համապատասխանեցնելը, ինչպես նաև Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացումը՝ հատկապես օրենսդրության շարունակական զարգացումը, Պրոբացիայի ծառայության կարգավիճակի վերանայումը, սոցիալական երաշխիքների նախատեսումը, տեխնիկական միջոցներով վերազինումը, պրոբացիայի շահառուների վերասոցիալականացումը³: Ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրն արդեն իսկ հաստատվել են ՀՀ կառավարության կողմից⁴, ինչը թույլ է տալիս ակնկալել սահմանված նպատակների ու գործողությունների իրականացում:

2 ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, Արտահերթ հրապարակային զեկույց: ՀՀ պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկում, 2018թ. <https://www.ombuds.am/images/files/1592b28948bf827457fc37b3cf0a0357.pdf>

3 ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թթ.-ի միջոցառումների ծրագիրը, Էջ 36-37, 2019 թ. <https://www.e-draft.am/projects/1829>

4 ՀՀ կառավարություն, 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-Լ որոշում, ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023թթ.-ի միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=152278>

Սույն հետազոտությունը կատարվել է՝ հիմք ընդունելով Պրոբացիայի ծառայության շուրջ 4-ամյա գործունեության օրենսդրական հիմքերի, պրակտիկ գործունեության արդյունքների ու նախադրյալների, ինչպես նաև դեռևս առկա մարտահրավերների ուսումնասիրման անհրաժեշտությունը:


Ուսումնասիրությունը բաղկացած է երկու մասից: Առաջին փուլում ուսումնասիրության առարկա են դարձել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտն ու հարակից օրենսդրությունը՝ վեր հանելով առկա բացերը, հակասություններն ու առաջնահերթ բարեփոխումների ուղղությունները: Ըստ այդմ, ուսումնասիրությունը ցույց է տալիս ծառայության արդյունավետ գործունեության և գործառույթների կատարման հիմնական օրենսդրական խոչընդոտները:

Այս փուլում ուսումնասիրության համար որպես տեղեկատվության հիմնական աղբյուր օգտագործվել են.

- «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը,
- քրեական արդարադատության ոլորտի օրենսդրական կարգավորումները՝ քրեակատարողական, քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը,
- քրեական արդարադատության ոլորտի վերոնշյալ օրենսգրքերի նախագծերը,
- քրեակատարողական ու պրոբացիայի ոլորտների ռազմավարությունը,
- ՀՀ կառավարության վերաբերելի որոշումները,
- ՀՀ արդարադատության նախարարության՝ ոլորտի վերաբերելի հրամանները,
- պրոբացիայի ոլորտի ուսումնասիրություններն ու առկա զեկույցները,
- իրավասու մարմիններին հասցեագրված տեղեկատվական հարցումները:

Չետագոտության երկրորդ փուլը հիմնվում է Պրոբացիայի ծառայության պրակտիկ գործունեության վրա. այն դեռևս ընթացքի մեջ է, արդյունքները հնարավոր կլինի ներկայացնել կարճ ժամանակ անց: Ընթացիկ փուլն իրականացվում է պրոբացիայի ծառայողների ու շահառուների հետ նպատակային առանձնագրույց-հարցազրույցների հիման վրա՝ նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով:

Ծառայության պրակտիկ գործունեության ուսումնասիրության արդյունքները վեր կհանեն ծառայության արդյունավետության աստիճանը շահառուների վերասոցիալականացման գործում, օրենքով նախատեսված միջոցառումների իրագործման ծավալները, բացթողումներն ու դրանց պատճառները, ծառայության կյանքական ռեսուրսների ու պայմանների վիճակը, դրանց առնչությամբ առկա հիմնախնդիրներն ու անհրաժեշտ փոփոխությունները, համագործակցությունը պետական և ոչ պետական մարմինների հետ, կադրային քաղաքականության հիմնահարցերն ու ծառայողների ծանրաբեռնվածությունը:



ՊՐՈԲԱՑԻԱՅԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐՆ ՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկում որպես առանձին գործողություն և նպատակ նախատեսված էր քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացումը: Այդ մասում առանձին տեղ էր հատկացված քրեակատարողական համակարգի բարեփոխումներին, որոնց շրջանակներում նախատեսվում էր ստեղծել պրոբացիայի ծառայություն⁵: Այն պետք է լիներ ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում՝ որպես քրեակատարողական ծառայությունից անկախ մարմին:

2012 թվականին հաստատվեցին դատաիրավական բարեփոխումների ծրագիրն ու գործողությունները, իսկ դրանից 2 տարի անց՝ 2014 թվականին, ընդունվեց երկրում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգը⁶: Այն ծառայության ներդրման անհրաժեշտությունը կապեց մի կողմից քրեակատարողական հիմնարկներում իրականացվող սոցիալական, հոգեբանական և

5 ՀՀ նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությունը ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին, 2012 թ. <http://www.irttek.am/views/act.aspx?aid=66316>

6 Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման վերաբերյալ, 2014 թ., փետրվարի 4, <http://moj.am/legal/view/article/598>


իրավական աշխատանքների ցածր արդյունավետության հետ, մյուս կողմից՝ ազատագրկման այլընտրանքային պատիժների ենթահամակարգերի զարգացման անհրաժեշտություն: Ծառայության անհրաժեշտությունը բխում էր նաև երկրի դատական պրակտիկայից: Մասնավորապես քրեական գործերի մինչդատական քննության փուլում մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց հիմնականում ընտրվում էր կալանավորումը, իսկ այս դեպքում անձը չէր «խուսափում» *ազատագրկում* պատժատեսակից. արդյունքում դատարանները հանցանք կատարած անձանց նկատմամբ գերազանցապես նշանակում էին *ազատագրկում* պատժատեսակը, ինչը ոլորտի առավել խնդրահարույց և մշտապես քննարկվող հարցերից էր:

Այստեղ հարկ է հիշեցնել, որ ՀՀ-ում դատապարտյալների այլընտրանքային պատիժների և հասարակությունում նրանց ուղղման ու վերականգնման աշխատանքների կատարման համար դեռևս 2005 թվականին ստեղծվել էին քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումները, որոնց խնդիրն էր ապահովել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված՝ ազատագրկմանը չառնչվող պատիժների կատարումը՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը և զույքի բռնագրավումը: Ավելի ուշ բաժնի առջև դրվեց նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալների, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց, պատժի կրման հետաձգումով հողի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման պարտականությունը⁷:

7 ՀՀ արդարադատության նախարարություն, «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1561-Ն որոշում, 2006 թ., հոկտեմբերի 26

Ինչպես ցույց տվեց վերոնշյալ բաժինների գործունեության փորձը, դատապարտված անձանց հետ ոչ մի ուղղիչ ու վերականգնողական աշխատանք չէր տարվում. նույն վիճակն էր նաև փորձաշրջանում գտնվողների և պայմանական վաղաժամկետ ազատվածների վարքի վերահսկողության դեպքում⁸:

Ըստ այդմ, տվյալ պայմաններում պրոբացիայի ծառայության ստեղծումը դիտարկվում էր որպես *ոլորտում առկա խնդիրների արդյունավետ լուծման տարբերակ, ինչպես դատարանների՝ ազատագրվածներն առնչվող պատիժներ անհարկի նշանակելու, այնպես էլ մեղադրյալների նկատմամբ կալանավորողումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերը և քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը նվազեցնելու միջոց*:



ՊՐՈԲԱՑԻԱՅԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԱՄՐԱԳՐՈՒՄԸ:
ՀԻՄՆԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Պրոբացիան հիմնված է ազատության պայմաններում հանցագործություն կատարած անձանց հետ աշխատանքի վրա՝ հանրության պաշտպանության և կրկնահանցագործության կրճատման նպատակով: Պրոբացիայի ծառայությունն ամբողջ Եվրոպայում աշխատում է համայնքային ուղղվածությամբ՝ այլընտրանքային միջոցներով և ազատագրկման փոխարինմամբ: Ի սկզբանե պրոբացիան ստեղծվել է կամավորական ու կրոնական կազմակերպությունների հենքի վրա, որոնք աշխատանք են տարել հանցագործություն կատարած անձանց հետ: Ներկայումս այն դարձել է քրեական արդարադատության համակարգի հիմնական ինստիտուտներից մեկը՝ դատարաններին առաջարկելով ազատագրկման մի խումբ այլընտրանքներ՝ հենվելով մասնագիտացված ու համապատասխան հմտություններ ունեցող անձնակազմերի վրա: Այն միևնույն ժամանակ օժանդակում է ազատագրկումից հասարակություն վերադարձած անձանց ու նպաստում վերջիններիս վերասոցիալականացմանը: Ըստ այդմ, պրոբացիան հիմնվում է օգնության, ուղղորդման ու վերասոցիալականացման սկզբունքների վրա⁹: Արդյունավետ պրոբացիոն ծառայություն ունեցող երկրները գործում են այս ուղղվածությամբ և առաջնորդվում նշված սկզբունքներով¹⁰:

9 The European Organization for Probation, CEP Statement on probation values and principles: <https://www.cep-probation.org/wp-content/uploads/2018/09/CEP-Statement-on-Probation-Values-and-Principles.pdf>

10 Probation in Europe: <https://www.cep-probation.org/knowledgebases/probation-in-europe/>

Հայաստանի Հանրապետությունում ներդրված և գործող պրոբացիայի ծառայությունը հիմնվեց այս նպատակային նշանակության և ի սկզբանե որդեգրեց նմանատիպ սկզբունքներ: Ըստ այդմ, դեռևս 2014 թվականին ընդունված հայեցակարգով կանխորոշվեցին պրոբացիոն ծառայության ինստիտուցիոնալ պատկանելությունը, հիմնական նպատակները, խնդիրներն ու գործառույթները:

Ըստ հայեցակարգի՝ ՀՀ պրոբացիայի ծառայության նպատակներն էին *հանցագործությունների նվազեցումը՝ հանցանք կատարած անձանց վերահսկելով, ուղղորդելով ու աջակցելով և նպաստելով նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը, հասարակության անվտանգությանը և արդարադատության իրականացմանը:*

Ծառայության հիմնական **խնդիրներն էին.**

- նպաստել հանցագործությունների կատարման ու կրկնահանցագործությունների նվազեցմանը,
- նպաստել քրեակատարողական հիմնարկների բեռնաթափմանը,
- նպաստել առավել տեղեկացված և անաչառ որոշումների կայացմանը խափանման միջոցի ընտրության և պատժի նշանակման գործընթացներում,
- նպաստել առավել տեղեկացված և անաչառ որոշումների կայացմանը դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ներկայացնելու գործընթացներում,
- նպաստել հանցանք կատարած անձի ուղղմանը հասարակությունում,
- նպաստել սոցիալական արդարության վերականգնմանը,
- նպաստել հանցանք կատարած անձի վերասոցիալականացմանը,

- ապահովել հասարակության անվտանգությունը հանցանք կատարած անձի՝ նոր հանցագործություններ կատարելու հավանականությունը նվազեցնելու միջոցով¹¹:

2016 թվականի մայիսի 17-ին ընդունվեց «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը¹² (այսուհետ՝ Օրենք), որն առավել հստակ և մանրամասն ներկայացրեց ինչպես ծառայության ընդհանուր նպատակներն ու սկզբունքները, այնպես էլ գործունեության հիմնական ուղղություններն ու փուլերը քրեական արդարադատության համակարգում:

Մասնավորապես Օրենքի 4-րդ հոդվածով ամրագրվեցին պրոբացիայի **հիմնական նպատակները՝ ըստ որոշակի փուլայնության**.

- 1) **քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի՝ նրա վրա դրած պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով,**
- 2) **հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաև նրանց ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը,**
- 3) **հասարակության անվտանգության ապահովումը կրկնահանգագործության կանխարգելման և կրճատման միջոցով,**

11 ՏԵՍ հղում 6

12 ՀՀ օրենքը պրոբացիայի մասին, ընդունվել է 2016 թվականի մայիսի 17-ին.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=105914>

4) պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) **հաշտեցնելը**,

5) քրեական արդարադատության իրականացման աջակցությունը:

Ճառայության հայեցակարգով և այնուհետ Օրենքով մատնանշված վերոնշյալ նպատակները համահունչ են Պրոբացիայի կանոնների մասին Եւ Նախարարների կոմիտեի՝ անդամ երկրներին ուղղած հանձնարարականին, որում ներկայացված է նաև պրոբացիայի ընդհանուր նպատակային նշանակությունը, այն է՝ պրոբացիան *վերաբերում է հասարակության մեջ օրենքով սահմանված և հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժների և միջոցների կիրառմանը, ինչը ներառում է միջամտության մի շարք տեսակներ՝ վերահսկողություն, ուղղորդում ու աջակցություն՝ ուղղված հանցագործություն կատարած անձի սոցիալական ներգրավմանն ու հանրային անվտանգության խթանմանը*¹³:

Ինչ վերաբերում է պրոբացիայի՝ Օրենքով սահմանված խնդիրներին, ապա դրանք ձևակերպվեցին այսպես.

1. քրեական վարույթի ընթացքում սույն օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարում,
2. ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարում,
3. ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլընտրանքային խափանման միջոցների կատարման անհատական պլանավորման իրականացում՝ ռիսկերի գնահատմամբ և պրոբացիայի շահառուի կարիքները հաշվի առնելով,

13 Council of Europe, Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules, (Adopted by the Committee of Ministers on 20 January 2010 at the 1075th meeting of the Ministers' Deputies), 2010: https://www.pmscr.cz/download/mezdoken_European_Probation_Rules.pdf

4. պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ պրոբացիայի շահառուի մասին խորհրդատվական զեկուլցների տրամադրում,
5. պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահիշսկողության իրականացում,
6. պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացում:

Չարկ է նշել, սակայն, որ ի սկզբանե ծառայության ներդրման հայեցակարգով ամրագրված խնդիրներից մեկը՝ *քրեակատարողական հիմնարկների բեռնաթափմանը նպաստելը*, որը իրավասու մարմինները պարբերաբար ներկայացնում էին որպես ծառայության ներդրման առանցքային նպատակ, պրոբացիայի հիմնական առաքելությունը չէ և, ըստ այդմ, չի կարող դիտարկվել որպես հայեցակարգային խնդիր: Սա ինքնին բացատրվում է պրոբացիայի՝ Նախարարների կոմիտեի վերոնշյալ հանձնարարականով տրված ընդհանուր բնութագրով, ինչպես նաև առանձին երկրներում պրոբացիայի ունեցած դերով¹⁴: Ըստ այդմ, քրեակատարողական հիմնարկների բեռնաթափումը պետք է լինի արդյունավետ գործող պրոբացիայի ծառայության բնական հետևանք և ո՛չ գործունեության հիմնական նպատակ:


Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պրոբացիայի ծառայություն ունեցող երկրներում այն հանցագործությունների և հանցագործների համար ազատազրկում չնախատեսող պատժի լավա-

14 Fergus McNeill University of Glasgow (UK), *What is the impact of probation on reducing re-offending and supporting desistance?* <https://www.cep-probation.org/probation-works/>

գույն տարբերակն է, ուստի և հասարակությանը վերաինտեգրվելու առավել լայն հնարավորություններ է նախատեսում: Ավելին, ծառայությունն ինքնին պակաս ծախսատար է¹⁵:

Վերոնշյալը համադրելով ՀՀ-ում ներդրված պրոբացիայի ծառայության նպատակների և խնդիրների հետ՝ կարող ենք արձանագրել, որ Օրենքով սահմանված նպատակային ուղղությունները, սկզբունքներն ու առաջ քաշված խնդիրները համահունչ են պրոբացիայի ընդհանուր սկզբունքներին, ինչն արդունավետ ծառայության անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայմաններից է:

15 UN Interregional Crime and Justice Research Institute: Handbook on Probation Services: http://www.unicri.it/services/library_documentation/publications/unicri_series/Probation_handbook.pdf



ՊՐՈԲԱՑԻԱՅԻ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ
ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՓՈԻԼԵՐԻ

Միավորված ազգերի կազմակերպության «Ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն կանոններ» փաստաթուղթը (Տոկիոյի կանոններ) սահմանում է այլընտրանքային պատժատեսակներն ու դրանց կիրառությունը քրեական արդարադատության բոլոր փուլերում¹⁶: Հիմք ընդունելով հանցանք կատարած անձի սոցիալական վերաինտեգրման, տուժողի շահերի պաշտպանության ու հասարակության անվտանգության նպատակները՝ Կանոնները նախատեսում են այլընտրանքային միջոցների լայն տեսականի՝

- պայմանական ազատում,
- տույժ,
- բանավոր սանկցիաներ, օրինակ՝ նկատողություն, նախազգուշացում,
- դրամական տուգանքներ,
- փոխհատուցում կամ նախկին վիճակի վերականգնում,

16 United Nations, UN Standard Minimum Rules for Non-custodial Measures, GA Resolution 45/110, 2. The Scope of non-custodial measures:
<https://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/tokyorules.pdf>

- պրոբացիա և դատական վերահսկողություն,
- հանրային աշխատանքներ,
- տնային կալանք և այլն:

Ինչպես կարող ենք նկատել, Կանոնները նախատեսում են նաև պրոբացիայի կիրառման հնարավորություն, որի գործառույթներն ու փուլային դերակատարումը քրեական արդարադատության գործընթացում կարող են տարբեր լինել:

Ի սկզբանե հայեցակարգով ՀՀ-ում նախատեսված էր պրոբացիայի փուլային ներդրում: Հայեցակարգը, հետագայում նաև Օրենքի կարգավորումները ցույց են տալիս, որ ըստ էության Պրոբացիայի ծառայության գործառույթները նախատեսված են քրեական արդարադատության բոլոր փուլերի համար՝ *մինչդատական, դատական, պենիտենցիար (պատժի կրման ընթացք) և հետպատժյա:*

Ըստ այդմ, Օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված նպատակներն ավելի մանրամասն ներկայացված են նույն օրենքի 3-7-րդ գլուխներում՝ արդեն որպես հիմնական գործառույթներ:

Այսպես, Օրենքի 3-րդ գլխով նախատեսված է ծառայության կողմից այլընտրանքային խափանման միջոցների կատարում՝ որպես քրեական վարույթի գործառույթ:

Այլընտրանքային խափանման միջոցները

Օրենքի 12-րդ հոդվածում բավարար մանրամասն ներկայացվում են այլընտրանքային խափանման միջոցի կատարման ապահովման կարգը, ժամկետները: Մասնավորապես ներկայացված են այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշումն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողի պարտավորությունները. *պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստա-*

տում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, իսկ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի դեպքում այցելում է պրոբացիայի շահառուի բնակության վայր, կազմում պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

Այլընտրանքային խափանման միջոց կիրառած իրավասու մարմնի որոշման հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա պրոբացիայի ծառայողը վերահսկողության պլանում սահմանում է պրոբացիայի շահառուի՝ վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվությունը:

Այն դեպքում, երբ պրոբացիայի շահառուն խախտում է այլընտրանքային խափանման միջոցի պայմանները, պրոբացիայի ծառայողը, հիմք ընդունելով նաև պրոբացիայի ներքին կանոնակարգը, միջոցներ է ձեռնարկում շահառուին հայտնաբերելու և իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև դրա մասին անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին¹⁷:

Այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ավարտը կամ դադարեցումը հավաստվում է տարածքային մարմնի՝ պրոբացիայի շահառուին տված տեղեկանքով: Տեղեկությունը փոխանցվում է նաև իրավասու մարմնին և ՀՀ ոստիկանությանը, իսկ անձնական գործն արխիվացվում է:

Օրենքը որոշ առանձնահատկություններ է ներկայացնում նաև տնային կալանքի ու վարչական հսկողության կատարման վերաբերյալ:

¹⁷ ՀՀ օրենքը պրոբացիայի մասին, 12-րդ հոդված, կետ 12, ընդունվել է 2016 թվականի մայիսի 17-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=105914>

Այսպես, սահմանված է, որ տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու մասին դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է պրոբացիայի շահառուին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահում քրեական վարույթն իրականացնող մարմին: Ընդ որում, այս երկու միջոցների մասին դատական ակտի պահանջները պարտադիր են պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինների, կազմակերպությունների, աշխատավայրի վարչակազմի, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերի համար, որտեղ դատարանի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել¹⁸:

Պրոբացիայի ծառայության ներդնումը, ինչպես արդեն նշվեց, ենթադրում էր այլ այլընտրանքային միջոցների ընդունում ու կատարում ևս՝ նախատեսված հարակից օրենսդրական ակտերով:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի թիվ 9 արձանագրային որոշմամբ հաստատված՝ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը և դրա հիման վրա մշակված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը նախատեսում են մի խումբ նոր այլընտրանքային խափանման միջոցներ և, ըստ այդմ, նաև դրանց կիրառման իրավաչափության առանձնահատկությունները¹⁹:

Հակիրճ անդրադառնալով օրենսգրքի նախագծին՝ պետք է նշել, որ այն մշակվել է երկու անկյունաքարային չափանիշի հիման վրա՝ նորարարություն և չափավոր պահպանողականություն:

Օրենսգրքի նախագիծը նախատեսում է հետևյալ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորություն՝

18 Նույն տեղում, հոդված 13

19 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/2085/justification>

- տնային կալանք,
- վարչական հսկողություն,
- գրավ,
- պաշտոնավարման կասեցում,
- բացակայելու արգելք,
- երաշխավորություն,
- դաստիարակչական հսկողություն,
- զինվորական հսկողություն:

Ընդ որում, սահմանվում է, որ այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ համակցված, եթե հնարավոր է ապահովել դրանց պայմանների միաժամանակյա պահպանումը:

Նախագիծը մանրամասն ներկայացնում է նաև յուրաքանչյուր տեսակի կիրառման առանձնահատկություններն ու կարգը²⁰:

Պետք է ակնհայտացնել, որ մինչ օրս՝ 2020 թվականի դրությամբ, Նշված միջոցները դեռևս միայն նախագծի մաս են և ո՛չ գործող կարգավորումներ, ինչի հետևանքով Պրոբացիայի ծառայությանը տրված իրավասություններն այս մասով ամբողջությամբ իրականացնել հնարավոր չէ: Այսինքն՝ չնայած նախատեսված փոփոխություններին՝ դրանք դեռևս կյանքի չեն կոչվել և պրոբացիայի շրջանակներում չեն կարող կիրառվել:

Այս հանգամանքին՝ որպես առանձին խնդրի, անդրադարձել է նաև ՀՀ պրոբացիայի ծառայությունը՝ մատնանշելով քրեական դատավարու-

20 Նույն տեղում, հոդված 123-130

յան օրենսգրքի փոփոխությունների ու այլընտրանքային խափանման միջոցների կատարման ապահովման անհրաժեշտությունը²¹:

Անդրադառնալով արդեն իսկ նախատեսված միջոցներին՝ հարկ է այլ երկրների և ՀՀ պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող այլընտրանքային միջոցների համեմատական ուսումնասիրություն կատարել:

Այսպես, գոյություն ունեն բավական մեծ թվով ու տարաբնույթ այլընտրանքային միջոցներ, որոնց ընտրությունը, սակայն, կոնկրետ համակարգում միանշանակ չէ և կախված է քրեական արդարադատության համակարգից, կարգավորումներից ու պրոբացիայի ծառայությանը տրված իրավասությունների շրջանակից: Եվրոպական երկրներում առավել տարածում գտած այլընտրանքային միջոցները, որոնք կիրառվում են պրոբացիայի շրջանակում, հետևյալն են.²²

- տևային կալանք (Չեխիա, Պորտուգալիա),
- հանրային աշխատանքներ/ծառայություն (Բելգիա, Բուլղարիա, Չեխիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Պորտուգալիա, Նիդեռլանդներ և այլն),
- ազատության սահմանափակում (Պորտուգալիա),
- վերահսկվող ազատություն. կիրառվում է հիմնականում անչափահասների նկատմամբ (Ռումինիա),
- որոշակի վայրում գտնվելու/մնալու արգելք (Չեխիա, Ֆրանսիա, Հունգարիա),
- սպորտային, մշակութային և այլ սոցիալական միջոցառումներին մասնակցելու արգելք (Չեխիա),

21 ՀՀ արդարադատության նախարարություն պրոբացիայի ծառայություն, թիվ 101-332 գրությամբ ներկայացված հարցման պատասխան, Հավելված 1

22 Probation measures and alternative sanctions in the EU:
<https://www.euprobationproject.eu/compare.php>

- մասնակցությունն աջակցող թերապիային՝ մշակված հատուկ մասնագետների պլանով (Չեխիա),
- որոշակի գործունեության արգելք (Չեխիա, Հունգարիա),
- պրոբացիայի հրաման, ինչը ենթադրում է, որ շահառուին մինչև 3 տարի ժամկետով վերահսկում է պրոբացիայի ծառայողը՝ դատարանի որոշած պայմաններում, որոնք կարող են ներառել վերոնշյալ միջոցները (Կիպրոս, Իռլանդիա, Մայթա),
- վարելու արգելք (Հունգարիա):

Հարկ է նշել, որ վերոնշյալ ցանկը սպառնիչ չէ, և գոյություն ունեն այլընտրանքային միջոցների այլ տեսակներ ևս:

Հարևան Վրաստանում գործող պրոբացիայի ծառայությունն իրականացնում է ազատագրվման այլընտրանք հանդիսացող հետևյալ խափանման միջոցները²³

- որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործողություններ կատարելու իրավունքի սահմանափակում,
- իրավաբանական անձի՝ որոշակի գործողություններ կատարելու իրավունքի սահմանափակում,
- որպես պատիժ՝ համայնքային ծառայության նշանակում,
- որպես պատիժ՝ ուղղիչ աշխատանքների նշանակում,
- որպես պատիժ՝ ազատության սահմանափակման կիրառում,
- որպես պատիժ՝ տնային կալանքի կիրառում:

23 Parliament of Georgia, Law of Georgia on the “Procedure for enforcing non-custodial sentences and probation”, 19/06/2007:
<https://matsne.gov.ge/en/document/view/21610?impose=translateRu&publication=26>

Կարող ենք արձանագրել, որ Օրենքը նախատեսում է գոյություն ունեցող ստանդարտներին ու հնարավորություններին համահունչ այլընտրանքային միջոցներ: Ներկայումս, սակայն, Պրոբացիայի ծառայությունն այլընտրանքային խափանման միջոցներ չի կիրառում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գործող քրեական դատավարության օրենսգիրքը նման հնարավորություն չի տալիս, թեև նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը պարունակում է այլընտրանքային միջոցների բավականին լայն շրջանակ: Ինչպես արդեն ներկայացվեց վերևում, նախագծով նախատեսված է շուրջ 8 նոր այլընտրանքային խափանման միջոցի կիրառում: արդյունավետ գործելու դեպքում սա բավարար է քրեական արդարադատության համակարգում պրոբացիայի նպատակային նշանակության ապահովման համար: Ավելին, ինչպես ցույց տվեցին եվրոպական երկրներում խափանման միջոցների հնարավորությունների վերը ներկայացված ցանկը և բազմազանությունը, ՀՀ-ում նախատեսված ցանկը լիովին համապատասխանում է գործող ստանդարտներին:

Այսինքն՝ պետք է փաստել, որ նախագծով նախատեսվածը դեռևս միայն տեսական մակարդակում գոյություն ունի, և Օրենքով ծառայությանը տրված լիազորությունները չեն իրականացվում, ինչի առաջնային պատասխանատուն տվյալ պարագայում նախագծերին ընթացք տվող գործադիր և օրենսդիր գերատեսչություններն են:

Չնայած այն հանգամանքին, որ Օրենքով Պրոբացիայի ծառայությանը տրված է այլընտրանքային խափանման միջոցների կատարման լիազորություն, այս պահին դա չի իրականացվում ինչպես գործող կարգավորումների ոչ պատշաճ կիրառման, այնպես էլ համալիր օրենսդրական լուծումների բացակայության պատճառով:

Անվտանգության միջոցներ

Օրենքը հաջորդիվ նախատեսում է նաև **անվտանգության միջոցների կատարման հնարավորությունը, կարգն ու պայմանները:**

Մասնավորապես անվտանգության միջոց նշանակելու մասին դատական ակտն ստանալուց հետո Պրոբացիայի ծառայությունն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, կապ հաստատում նրա հետ, պատշաճ ծանուցում տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, կազմում պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

Նախատեսված են նաև անվտանգության միջոցի պայմանները խախտելու իրավական հետևանքները, համաձայն որի՝ *պրոբացիայի շահառուի՝ առաջին անգամ անհարգելի պատճառով չներկայանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում տարածքային մարմինն այդ մասին կազմում է արձանագրություն և անվտանգության միջոցի տեսակը փոխելու միջնորդություն ներկայացնում դատարան:*

Օրենքի 17-22-րդ հոդվածներով, ըստ այդմ, սահմանվում են տեսակները՝

- որոշակի վայրեր այցելելու արգելք,
- հոգեբանական օգնություն ստանալու պարտականության կատարում,
- վարքագծի նկատմամբ հատուկ հսկողություն,
- ընտանեկան հսկողություն,
- ներգրավում կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին:

Չնայած այն հանգամանքին, որ Օրենքը նախատեսում է քրեական օրենսդրությամբ սահմանված անվտանգության միջոցի կա-

տարման ապահովման կարգը, և նույն օրենքի 5-րդ գլուխը, որով նախատեսված են միջոցները, ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից, գործող քրեական օրենսգրքով անվտանգության միջոցներ սահմանված չեն: Դրանք տեղ են գտել քրեական նոր օրենսգրքի նախագծում, որը դեռևս ուժի մեջ չի մտել: Ստացվում է, որ այս մասով ևս կարգավորումներն ու դրանց պրակտիկ կիրառման երաշխիքները թերի են:

Քրեական օրենսգրքի նախագծով մասնավորապես սահմանվում է, որ դատարանը կարող է նշանակել անվտանգության միջոց, եթե գտնի, որ սույն օրենսգրքով պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը կրկին կարող է նման արարք կատարել, կամ անվտանգության միջոցի կիրառումն անհրաժեշտ է անձի կամ հասարակության անվտանգությունն ապահովելու համար²⁴:

Անվտանգության միջոց կարող է նշանակվել ինչպես պատժի հետ զուգակցված, եթե դատարանը հիմնավորի, որ միայն պատիժ կիրառելով հնարավոր չէ վերացնել անձի՝ նոր հանցանք կատարելու հավանականությունը, այնպես էլ առանց պատժի հետ զուգակցելու՝ որպես ինքնուրույն ներգործության միջոց, այդ թվում՝ անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս:

Ընդ որում՝ անձի՝ պատժի սպառնալիքով արգելված, բայց կատարած մեկ արարքի համար կարող են կիրառվել մեկից ավելի անվտանգության միջոցներ:

Ինչ վերաբերում է տեսակներին, ապա պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ կարող են կիրառվել անվտանգության հետևյալ միջոցները՝

1. բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ՝
 - հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում,

24 Քրեական օրենսգրքի նախագիծ, հոդված 116

– հոգեբուժական հաստատությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում,

– հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում,

2. որոշակի վայրեր այցելելու արգելք,

3. հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն:

Այսինքն՝ «Պրոբացիայի մասին» օրենքով նախատեսված այս միջոցները նույնպես չեն կատարվում, քանի որ գործող քրեական օրենսգրքը նման կարգավորումներ չունի, իսկ նոր օրենսգրքի նախագիծը և վերոնշյալ դրույթները դեռևս ուժի մեջ չեն մտել:

Անվտանգության միջոցների օրենսդրական կարգավորումները կյանքի կոչելու համար քրեական օրենսգրքի փոփոխությունների ընդունումը, սակայն, բավարար չի կարող լինել, քանի որ այն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր պայմանները՝ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներ և ապահովվածություն, արդյունավետ համագործակցություն դատական մարմինների հետ և միջոցները կյանքի կոչելու գործուն մեխանիզմներ:

Պրոբացիայի ծառայության գործառույթները պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու գործընթացներում

Պրոբացիայի և հատկապես պրոբացիայի ծառայողի դերը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու գործընթացներում կատարվում է խորհրդատվական զեկուլյցների միջոցով: Դրանք կազմվում են տվյալների շտեմարանում առկա տեղեկությունների, անձնական գործի, պրոբացիայի շահառուի, նրա ուսման կամ աշխատանքի վայրի վարչակազմի, ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների, հարևանների հետ հան-

դիպումների, հարցումների արդյունքում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հիմնարկներից և այլ կազմակերպություններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև համապատասխան քրեակատարողական հիմնարկի ծառայողների և այլ անձանց տրամադրած տվյալների հիման վրա:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ Պրոբացիայի ծառայության զեկույցները կազմվում են ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 336-Լ հրամանի հիման վրա²⁵:

Զեկույցը պետք է մասնավորապես ընդգրկի անձի

- 1) անունը, ազգանունը, հայրանունը,
- 2) ծննդյան օրը, ամիսը, տարին,
- 3) անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը,
- 4) աշխատունակությունը, աշխատանքային ստաժը և զբաղմունքի տեսակը,
- 5) կրթությունը,
- 6) առողջական վիճակը,
- 7) սոցիալական, գույքային դրությունը,
- 8) ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

25 Հրաման N 336-Լ, ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի, ՀՀ ԱԼ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևը հաստատելու մասին. http://probation.am/sites/default/files/hashvetutyunner/336L_Hraman.pdf

- 9) բնակության մշտական վայրի առկայությունը,
- 10) որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները,
- 11) արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը,
- 12) վերաբերմունքն իր կատարած հանցանքի նկատմամբ,
- 13) քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում դրսևորած վարքագիծը, աշխատանքային գործունեությունն ու մասնակցությունը մշակութային, կրթական միջոցառումներին,
- 14) ուղղմանը և վերասոցիալականացմանը վերաբերող տվյալներ,
- 15) այլ հանգամանքներ:

Ձեկույցների տրամադրման պարտականություն օրենսդիրը սահմանել է Պրոբացիայի բոլոր ծառայողների համար՝ առանց որոշակի դասակարգման և չափանիշների, ինչը խնդրահարույց է: Նախ գոյություն չունի ծառայության ներսում առանձին բաժին կամ ծառայողների խումբ, որը մասնագիտացած կլինի հատկապես զեկույցների պատրաստման գործում: Սա նշվում է հատկապես այն պատճառով, որ գրվող զեկույցը շահառուի համար էական նշանակություն ունեցող փաստաթուղթ է, և դրանում պարունակվող տեղեկության նկատմամբ պետք է դրսևորվի հնարավորինս մասնագիտական մոտեցում:

Ավելին, զեկույցի մաս կազմող որոշ տեղեկություններ, ինչպիսիք են, օրինակ, կատարած հանցանքի նկատմամբ իրական վերաբերմունքի բացահայտումը, անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, կախվածությունների ու հակումների բացահայտումը, ուղղման ու վերասոցիալականացման միտումները և այլն, պահանջում են մասնագիտական մոտեցում, հատուկ գործիքների կիրառում և ուղղորդող չափանիշներ, ինչն օբյեկտիվորեն անհնար է իրականացնել ներկայիս ծառայության մարդկային, նյութական և այլ ռեսուրսներով հագեցվածության պայմաններում:

Ծառայողի՝ արդեն իսկ հիմնարկից տրված տվյալի հիման վրա նմանատիպ տեղեկությունն ուղղակիորեն շարադրելը և ներկայացնելը հանգեցնում է մեկ այլ խնդրի, այն է՝ այս գործընթացում պրոբացիայի դերի և պատրաստված զեկույցի սուկ արհեստական բնույթ կրելուն: Նման ռիսկերից խուսափելու համար անհրաժեշտ է դնել օրենսդրական պահանջ, համաձայն որի՝ զեկույցները կկազմի հատուկ առանձնացված խումբը՝ դրա համար անհրաժեշտ գործիքակազմի կիրառմամբ:

Վերոնշյալ հրամանը սահմանում է նաև, որ զեկույցը կազմելու և դատապարտյալի անձնական գործն ուսումնասիրելու նպատակով պրոբացիայի *ծառայողն առնվազն մեկ անգամ այցելում է պատիժը կատարող համապատասխան հիմնարկ*, զրուցում դատապարտյալի հետ, դատապարտյալի անձնական գործի ուսումնասիրման հիման վրա կազմում քաղվածք, անհրաժեշտության դեպքում կատարում պատճեններ:

Չնայած սահմանված է, որ ծառայողն առնվազն մեկ անգամ պետք է այցելի պատիժը կատարող համապատասխան հիմնարկ, այնուհանդերձ, հաշվի առնելով ծառայողների ծանրաբեռնվածությունն ու գործընթացի ժամկետների սահմանափակ լինելը, հանդիպումները լինում են հիմնականում նվազագույն քանակով և կարճ ժամկետով, ինչն արդեն իսկ չի կարող բավարար համարվել շահառուի վերաբերյալ հավաստի և վստահելի տեղեկություններ հավաքելու համար²⁶:

Քրեական օրենսգրքի և «Պրոբացիայի մասին» օրենքի վերլուծությունից²⁷ բխում է, որ Պրոբացիայի ծառայությունը նաև ունի իրավասություններ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու գործընթացում, որն իրականացվում է կրկին խորհրդատվական զեկույցի ներկայացման միջոցով: Չեկույցները պետք է համապատասխանեն վերևում նշված պահանջներին, սակայն ինչպես արդեն իսկ ցույց է տվել պրակտիկայի ուսումնասիրությունը, նման զեկույցներ չեն կազմվում²⁸:

26 Չեկույցների վերաբերյալ առավել հանգամանալից տեղեկություն, առկա ռիսկերի ու խնդիրների վերլուծությունն կներկայացվի հետագոտության երկրորդ՝ պրակտիկ փուլի ուսումնասիրության ու ամփոփման ավարտին

27 ԳՅ քրեական օրենսգրք, հոդված 77

28 ՏԵՍ հոդված 2, էջ 97

Վերասոցիալականացմանն ուղղված գործառույթներ

Ի սկզբանե պրոբացիան քրեական արդարադատության համակարգերում ներդրվել է որպես հանցագործություն կատարած անձանց սոցիալական վերաինտեգրման և հանցագործությունների դեմ պայքարի կանխարգելիչ միջոց: Եվրոպական երկրներում այն ընդունվեց և հետագայում տարածում գտավ որպես պատժիչ համակարգի վերացման կարևոր սկզբունք:

Ըստ այդմ, պրոբացիայի շրջանակներում հանցագործությունների թվի նվազումն ուղղակիորեն կապվում է հանցագործություն կատարած անձի հետ դրական հարաբերություն ստեղծելու և սոցիալական վերաինտեգրմանը աջակցելու հետ²⁹:

Այս մոտեցումը որդեգրվեց նաև ՀՀ-ում պրոբացիայի ծառայության ներդրմամբ և ամրագրվեց օրենսդրական կարգավորումներում: Շահառուների վերասոցիալականացման գործում Պրոբացիայի ծառայության գործառույթները նախատեսվեցին օրենքով:

Մասնավորապես Պրոբացիայի ծառայությունն իր մոտ հաշվառված շահառուների վերասոցիալականացման նպատակով մշակում և իրականացնում է համապատասխան աշխատանքի և սոցիալական ապահովությանը, մշակութային, կրթական, մասնագիտական վերապատրաստմանը և վերաորակավորմանը, սպորտային, առողջապահական, հոգեբանական, վարքաբանական զբաղվածությանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր:³⁰

Վերասոցիալականացման միջոցառումների նպատակը սոցիալական վերականգնման կարճաժամկետ կամ երկարաժամկետ աշխատանքներ և ուսումնական ծրագրեր, ինչպես նաև ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ, հոգեմետ, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր գործածելու դեմ պայքարի ոլորտում հատուկ ծրագրեր նախաձեռնելն ու իրականացնելն է:

29 UN Interregional Crime and Justice Research Institute, Handbook on Probation Services: http://www.unicri.it/services/library_documentation/publications/unicri_series/Probation_handbook.pdf

30 ՀՀ օրենքը պրոբացիայի ծառայության մասին, 28-րդ հոդված

Այդ նպատակով կազմվում է վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր՝ հաշվի առնելով կոնկրետ շահառուի առանձնահատկությունները:

Վերասոցիալականացման վերոնշյալ կարգավորումներում մտահոգիչ է գործառույթի իրականացման համար ծառայության ներսում պատասխանատու շրջանակի որոշակիության հարցը, քանի որ այս գործառույթը չի վերապահվում կոնկրետ խմբին կամ բաժնի ծառայողներին, և Օրենքը տալիս է այս առումով ընդհանրական կարգավորումներ, ինչը պրակտիկայում կարող է խնդիրներ առաջացնել:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերասոցիալականացման միջոցառումները ծառայությունն իրականացնում է անհատական ծրագրի հիման վրա՝ երկու փուլով՝ մշակման և իրականացման: Մշակման փուլում գնահատվում են պրոբացիայի շահառուի ռիսկերը և պահանջմունքները: Իրականացման փուլը ներառում է պրոբացիայի շահառուի՝ կրթական, մարզական, մշակութային ծրագրերում ընդգրկվելը, հոգեբանական և զբաղվածության ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացումը³¹:

Օրենսդրական մակարդակում գործառութների նման համակցությունն ու իրավասությունների շրջանակը բավարար են ծառայության առջև դրված նպատակների իրագործման համար: Այս առումով առավել ուշադրության կարիք ունեն պրակտիկայում վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումների ու աշխատանքների ինտենսիվությունն ու ծավալը, դրանց համար անհրաժեշտ կյութատեխնիկական, ծրագրային ու մարդկային ռեսուրսները, առանց որոնց այս նպատակը սոսկ հռչակագրային բնույթ կունենա:

31 Պրոբացիայի ծառայության տրամադրած պաշտոնական տեղեկատվություն, գրություն թիվ Ե/Կ-1-92

Էլեկտրոնային վերահսկողություն

Օրենքը նախատեսում է նաև Էլեկտրոնային հսկողության կիրառման հնարավորություն. մինչդեռ տական և դատական քննության փուլերում՝ որպես այլընտրանքային խափանման միջոցների և անվտանգության միջոցների հետ համակցված միջամտություն, կամ պատժի կատարման փուլում՝ որպես պատժի կատարման հետ համակցված հսկողության միջոց, կամ հետպատժյա փուլում³²: Այսինքն՝ Օրենքն Էլեկտրոնային հսկողության հնարավորություն նախատեսում է քրեական արդարադատության բոլոր փուլերում:

Օրենքը նախատեսում է Էլեկտրոնային հսկողության կիրառման կարգը, պայմանները, տեսակներն ու տևողությունը: Մասնավորապես պատժի կատարման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող, հղի կանանց, մինչև երեք տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժի կրումից ազատված կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության կատարման դեպքերում Էլեկտրոնային միջոցներով հսկողություն կիրառելիս դատարանն առնվազն հաշվի է առնում պրոբացիայի շահառուի

- 1) անձը բնութագրող տվյալները,
- 2) տարիքը,
- 3) առողջական վիճակը,
- 4) զբաղմունքի տեսակը,
- 5) բնակության մշտական վայրի առկայությունը,
- 6) ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

32 Տե՛ս հղում 30, 41-րդ հոդված

7) արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

Չամաձայն կարգավորումների՝ էլեկտրոնային հսկողությունն իրականացվում է գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող կամ ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ այլ տեխնիկական սարքերի և էլեկտրոնային ծրագրերի կիրառմամբ, ինչը հնարավորություն է տալիս պարզելու պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, տեղաշարժը, վարքագիծը և դատական ակտով սահմանված սահմանափակումների պահպանումը:

Օգտագործվող սարքավորումներն ամրացվում են պրոբացիայի շահառուին կամ տեղադրվում վերջինիս բնակության կամ գտնվելու վայրում և կիրառվում միայն այն ժամանակահատվածում, որը նախատեսված է դատական ակտով:

Ինչ վերաբերում է հսկողության ֆինանսավորմանը, ապա օրենսդիրը նախատեսել է ճկուն մեխանիզմ՝ հնարավորություն տալով կիրառման ծախսերը փակել պետական բյուջեի կամ պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին: Որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի անձի գույքային դրությունը, ընդ որում՝ շահառուի՝ բավարար միջոցներ չունենալը չի կարող էլեկտրոնային հսկողության կիրառումը մերժելու հիմք լինել:

Նման կարգավորումը և հսկողության միջոցի նախատեսումն ինքնին ողջունելի են, սակայն դրանք վերևում արդեն նշված հարակից օրենսդրական ակտերի բացակայության պատճառով ներկայումս չեն կիրառվում: Այս դեպքում ևս առկա է իրավիճակ, երբ օրենքով նախատեսված է միջոցառում, որն ունի սոսկ տեսական բնույթ, քանի որ դրա գործարկումը կախված է հարակից օրենսդրական կարգավորումներից: Ավելին, որոշ հարցեր, ինչպիսիք են, օրինակ, պատասխանատվությունը էլեկտրոնային հսկողության տեխնիկական սարքի խափանման համար, պրակտիկ կիրառման մանրամասն եղանակներն ու մեխանիզմները, դուրս են մնացել կարգավորումներից: Զրեական դատավարության օրենսգրքի նախագիծն էլեկտրոնային հսկողությանն անդրադառնում է երկու

դրույթով՝ տնային կալանք և վարչական հսկողություն³³. այլ կարգավորումներ այս հարցի առնչությամբ բացակայում են:

Վրաստանում, օրինակ, օրենքը հստակ նախատեսում է էլեկտրոնային հսկողության միջոցի կատարման ընթացակարգը: Օրենքը սահմանում է նաև, որ եթե հսկողության միջոցը խափանվել է շահառուի մեղքով, ապա համապատասխան փոխհատուցումը պետք է կատարի վերջինիս ներկայացուցիչը³⁴:

Ներկայացվածը թույլ է տալիս փաստել, որ մի կողմից առկա են օրենսդրական թերի կարգավորումներ, ինչը նախագծերն ընդունելուց կարճ ժամանակ անց կպահանջի լրացուցիչ փոփոխություններ, մյուս կողմից հարակից օրենսդրական կարգավորումները համապատասխանեցված չեն, և նման պայմաններում էլեկտրոնային հսկողության կիրառումը պրակտիկայում կուղեկցվի մի շարք խնդիրներով:

Հարկ է նշել նաև, որ էլեկտրոնային հսկողության արդյունավետ կիրառումը միևնույն ժամանակ կախված է որոշ այլ հանգամանքներից, օրինակ՝ ծախսերի ճիշտ հաշվարկ և կառավարում, հսկողության միջոցների տեսակներ ու ձեռքբերման եղանակներ /վարձակալություն, թե՞ գնում/, ինչն արդեն պրակտիկայի հարց է, և հնարավոր կլինի գնահատել փորձարկելուց հետո:

Առանձին երկրներում արդեն իսկ ներդրված և գործող պրակտիկական այս առումով փաստում է վերոնշյալ ռիսկերի կարևորությունն ու ճիշտ գնահատումը, ինչի պայմաններում միայն հնարավոր կլինի ապահովել դրա արդյունավետ կիրառումը:

Ընդհանուր առմամբ էլեկտրոնային հսկողության՝ որպես պրոբացիայի ծառայության շրջանակներում գործող միջոցի և որպես այլընտրանքային խափանման միջոցի պատկերը եվրոպական երկրներում հետևյալն է.

33 Զրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, հոդված 123-124

34 Parliament of Georgia, Law of Georgia on the procedure for enforcing non-custodial sentences and probation, Procedure for enforcing House arrest sentences, article 44

		ԲԵԼԳԻԱ	ԲՈՒԼԴԱՐԻԱ	ԿԻՊՐՈՍ	ՉԵԽԻԱ	ԴԱՆԻԱ	ԱՆԳՎԻԱ	ՖԻՆԼԱՆԴԻԱ	ԼԱՏՎԻԱ	ՖՐԱՆՍԻԱ	ԼԻՏՎԱ
	Էլեկտրոնային մշտադիտարկում	✓	✓	✓		✓	✓	✓		✓	
Կարգավորումը ներպետական օրենսդրությամբ	Պրոբացիայի միջոց/այլընտրանքային խափանման միջոց							✓			
	Պրոբացիայի միջոցի վերահսկման եղանակ		✓				✓		✓		
	Ազատագրկման կատարման եղանակ	✓		✓		✓			✓		

Հաշտարարության ոլորտում պրոբացիայի ծառայության գործառույթներն ու օրենսդրական կարգավորումները

Օրենսդիրը «Պրոբացիայի մասին» օրենքով սահմանել է Պրոբացիայի իրավասությունները նաև հաշտարարության փուլում: Այսպես, հաշտարարությունը հնարավոր է դատական քննության փուլում, ազատագրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում: Այն սահմանվել է որպես պրոբացիայի շահառուի և տուժողի /տուժողի իրավահաջորդի/ հաշտեցմանն ուղղված բանակցությունների իրականացում՝ ծառայության ղեկավարի նշանակած հաշտարարի՝ պրոբացիայի ծառայողի միջոցով³⁵: Նորմի մեկնաբանությունը թույլ է տալիս արձանագրել, որ պրոբացիայի ցանկացած ծառայող կարող է հանդես գալ հաշտարարի կարգավիճակում, ինչը փոքր-ինչ խնդրահարույց է: Նախ, օրենսդիրը չի նախատեսել հաշտարարին ներկայացվող կոնկրետ պահանջներ, հետևաբար նույնիսկ առանց համապատասխան վերապատրաստման կամ հմտությունների՝ անձը կարող է ստանձնել նման կարևոր գործառույթ: Ավելորդ ռիսկերից խուսափելու համար առավել նպատակահարմար կլիներ նախատեսել որոշակի չափանիշներ, որոնց հիման վրա կընտրվեր կոնկրետ ծառայողը/հաշտարարը:

Դատական քննության փուլում այն նախաձեռնելու իրավասությունը տրված է դատարանին, ազատագրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում՝ Պրոբացիայի ծառայության ղեկավարին:

Օրենքով սահմանված են նաև հաշտարարության գործընթացի կազմակերպումը, ժամկետներն ու ավարտը: Առաջին հայացքից հաշտարարության ինստիտուտը նման կարգավորումներով պետք է ունակ լիներ լուծելու իր առջև դրված խնդիրները, սակայն կրկին պետք է անդրադառնալ քրեական արդարադատության համակարգի ընդհանուր օրենսդրական կարգավորումներին, որոնց համատեքստում էլ ներկայումս հաշտարարության ինստիտուտը չի գործում:

35 Օրենքի 29-րդ հոդված

Այսպես, քրեական օրենսգրքի գործող տարբերակում հաշտարարության վերաբերյալ կարգավորումներ առկա չեն: Օրենսգիրքը նախատեսում է միայն տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը. *«Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»*:³⁶

Ստացվում է, որ չնայած օրենքով հաշտարարության ինստիտուտը նախատեսված է, սակայն գործող քրեական օրենսդրությամբ բավականաչափ կարգավորված չլինելու պատճառով այն կրկին չի գործում:

Ինչ վերաբերում է քրեական օրենսգրքի փոփոխությունների նախագծին, ապա հաշտարարություն, որպես այդպիսին, նախատեսված չէ: Նախագծի 87-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվությունից ազատում տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով: Սա վերաբերում է քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին՝ քրեական վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքով կամ մասնավոր մեղադրանքի գործերով: Նման կարգավորումն ըստ էության համահունչ չէ «Պրոբացիայի մասին» օրենքում առկա հաշտարարության կարգավորումներին: Ավելին, չեն հստակեցվել հաշտեցման գործընթացը նախաձեռնող և կազմակերպող սուբյեկտն ու վերջինիս կարգավիճակը: Ստացվում է, որ Օրենքով արդեն իսկ նախատեսված հաշտարարության կարգավորումները տեղ չեն գտել հարակից օրենսդրական ակտերում ու նախագծերում:


Պրոբացիան հետպատժյա փուլում

Ինչպես արդեն ներկայացվել է, ըստ օրենսդրական կարգավորումների՝ ծառայությունը գործում է քրեական արդարադատության տարբեր փուլերում՝ ներառյալ հետպատժյա: Սա բացատրվում է նրանով, որ Պրոբացիայի ծառայության գործառնությունների իրականացման ժամանակահատվածը պատժի կրումից հետո մինչև դատվածության մարումը կամ օրենքով սահմանված կարգով այն հանելու է:

36 ԳՂ քրեական օրենսգրք, հոդված 73

Առկա կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետպատժյա փուլում Պրոբացիայի լիազորությունները ներառում են հաշտարարությունը՝ Պրոբացիայի ծառայության ղեկավարի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ, ինչպես նաև էլեկտրոնային հսկողությունը: Ինչպես արդեն նշվեց, ո՛չ մեկը, ո՛չ մյուսը դեռևս չեն գործում՝ անկախ օրենսդրական կարգավորումներից: Այսինքն՝ հետպատժյա փուլում հնարավոր չէ կատարել սահմանված գործառնությունները:

Սրան զուգահեռ պետք է ուշադրություն դարձնել նաև այս փուլի օրենսդրական կարգավորումների որոշակիության հարցին: Այսպես, օրենսդիրը չի հստակեցնում, թե ինչպես պետք է հետպատժյա փուլում Պրոբացիայի ծառայությունը գործունեություն ծավալի, հատկապես այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձը կրել է դատարանի որոշմամբ սահմանված պատժի ողջ ժամանակահատվածն ու սահմանված կարգով ազատ արձակվել: Չի հստակեցվում, թե նման իրավիճակներում ինչի հիման վրա և հատկապես ինչպես կարող է պրոբացիոն ծառայողն էլեկտրոնային հսկողություն իրականացնել, մինչդեռ կարգավորումների հստակությունից և կանխատեսելիությունից է կախված պրակտիկ կիրառման արդյունավետությունը, ինչը նման կարգավորումների պայմաններում դեռևս մտահոգիչ է:



ՊՐՈԲԱՑԻԱՅԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Դեռևս 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի համաձայն՝ պրոբացիայի ծառայությունը երկրում նախատեսվում էր ստեղծել ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում՝ որպես քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին մարմին:

Ծառայության ինստիտուցիոնալ նման կարգավիճակը հետագայում հաստատվեց արդեն 2016 թվականին ընդունված «Պրոբացիայի մասին» օրենքով ու 2018 թվականին ընդունված ծառայության ներքին կանոնադրությամբ³⁷:

Այսինքն՝ ծառայությունը հիմնադրվեց գործադիր մարմնի կազմում՝ որպես անկախ մարմին: Նման կարգավորումն ընդունված է մի շարք երկրներում և աչքի է ընկնում գործառույթային բազմազանությամբ:

Պրոբացիայի ինստիտուցիոնալ պատկանելության վերաբերյալ առանձին երկրներում պրակտիկան տարբեր է: Մի շարք երկրներում,

37 ՀՀ կառավարություն, ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության ներքին կանոնակարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1561 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, 2018 թ.

ինչպիսիք են Մոլդովան³⁸, Ռումինիան³⁹, Ֆինլանդիան⁴⁰, Դանիան⁴¹, Անգլիան⁴² և այլն, ծառայությունը գործադիրի կազմում է՝ լինելով կամ արդարադատության համակարգի մաս, կամ կից այլ մարմին:

Կան երկրներ, որտեղ պրոբացիան գործում է բանտային համակարգի ներսում: Սրա լավագույն օրինակն է Ֆրանսիան⁴³: Հիմնական առանձնահատկությունն այն է, որ քրեական արդարադատության որոշ փուլերում, օրինակ՝ մինչդատական փուլում, պրոբացիայի ծառայության գործառույթները սահմանափակ են: Գոյություն ունեն նաև համակարգեր, որտեղ ծառայությունը պատվիրակված է մասնավոր հատվածին, սակայն գործում է արդարադատության նախարարության ֆինանսավորմամբ և վերահսկողությամբ: Նման պրակտիկա առկա է Նիդեռլանդներում⁴⁴:

Չնայած գործող համակարգերի տարբերություններին՝ պրոբացիայի ծառայությունն ի վերջո գնահատվում է՝ հիմք ընդունելով իր առջև դրված խնդիրներին ու նպատակներին ուղղված արդյունավետ գործունեությունը: Այս առումով ՀՀ-ում ԱՆ կազմում որպես անկախ մարմին գործելը ընդունելի մոտեցում է, սակայն պետք է հաշվի առնել գործառույթային իրական անկախության երաշխիքները, վերահսկողության ու ֆինանսավորման հիմնահարցերը, որոնք էական դերակատարում ունեն արդյունավետության ապահովման գործում:

38 Ministry of Justice of Republic of Moldova, Probation Division:
http://probativne.gov.md/?new_language=0&go=page&p=123

39 Ministry of Justice of Romania, National Probation Directorate:
<http://www.just.ro/en/directia-nationala-de-probativne/>


40 Criminal Sanctions Agency of Finland:
<https://www.rikosseuraamus.fi/en/index/criminalsanctionsagency.html>

41 Prison and Probation Service in Denmark:
<https://www.justitsministeriet.dk/generelt/english/justice-system>

42 Prison and Probation Service in United Kingdom:
<https://www.gov.uk/government/organisations/her-majestys-prison-and-probation-service>

43 Direction de l'administration pénitentiaire: <http://www.justice.gouv.fr/le-ministere-de-la-justice-10017/direction-de-ladministration-penitentiaire-10025/>

44 Ministry of Justice and Security, Netherlands:
<https://www.government.nl/ministries/ministry-of-justice-and-security>



ՊՐՈԲԱՑԻԱՅԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿՈՐՈՒՄԸ

Պրոբացիայի արդյունավետ գործունեության նախապայմաններից է ծառայության ֆինանսական երաշխիքների առկայությունը, ինչն առաջին հերթին պետք է հստակ օրենսդրական կարգավորում ունենա:

Օրենսդրության ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ այս առումով ևս կարգավորումները թերի են:

Այսպես, Օրենքը 53-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսում է դրույթ առ այն, որ *Պրոբացիայի ծառայության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:*

Այլ կարգավորում այն մասին, թե ինչպես են կազմվում բյուջեն և տարեկան ծախսերի հայտը, ում են ներկայացվում և ինչպես են հաստատվում, հստակեցված չէ:

Ինչպես երևում է ՀՀ կառավարության 2020 թվականի ինտերակտիվ բյուջեով հասանելի տվյալներից, նույն թվականի համար Պրոբացիայի ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով հատկացվել է ընդամենը 3.220.000 ՀՀ դրամ⁴⁵, ընդ որում՝ **կալանավայրեր տողի տակ:** Հաշվի առնելով ծառայության՝ Երևան քաղաքի, մարզային ու մասնագիտա-

45 Ինտերակտիվ բյուջե, 2020 թ. <https://www.e-gov.am/interactive-budget/>

կան ստորաբաժանումների քանակը՝ կարող ենք արձանագրել, որ նման բյուջետային հատկացումն ունակ չէ ապահովելու ամբողջ ծառայության տեխնիկական հագեցվածությունը՝ հանգեցնելով պրակտիկ խնդիրների:

Ավելին, ինչպես ցույց է տալիս պրակտիկայի ուսումնասիրությունը, ծառայության ֆինանսական ծախսերի հայտը ներկայացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը, և Պրոբացիայի ծառայությունն ինքնուրույն գործառույթ այս գործընթացում չունի:

Առանձին երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երկրներում, որտեղ ծառայությունը գործադիրի մաս է, ֆինանսավորումն իրականացվում է արդարադատության նախարարության միջոցով⁴⁶: Կան երկրներ, օրինակ՝ Բուլղարիան, Ռումինիան, որտեղ ծառայության բյուջեն առանձնացված է բանտային համակարգի բյուջեից:

Չնայած գոյություն ունեցող համակարգերի և մեխանիզմների տարբերությանը՝ յուրաքանչյուր պարագայում անհրաժեշտ է սահմանել ծառայության ֆինանսավորման բավարար օրենսդրական կարգավորումներ և ապահովել ողջամիտ հատկացումների առկայությունը՝ որոշումների կայացմանը վերջինիս մասնակցությամբ:

46 Anton van Kalmthout and Ioan Durnescu, European Probation Service Systems, a comparative overview, 2008

ԱՄՓՈՓՈՒՄ:
ՀԻՄՆԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Գործող Պրոբացիայի ծառայության վերաբերյալ առկա օրենսդրական հիմնական ու հարակից կարգավորումների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել օրենքի մակարդակում ծառայության արդյունավետ գործունեության առկա երաշխիքները, հիմնական բացթողումներն ու ռիսկերը:

Մասնավորապես, ի սկզբանե պրոբացիայի հայեցակարգը, հետագայում նաև Օրենքը մշակվեցին ու ընդունվեցին որպես ոլորտում առկա խնդիրների արդյունավետ լուծման տարբերակ, դատարանների՝ ազատագրկմանն առնչվող պատիժների անհարկի նշանակման, մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերը և նաև քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը նվազեցնելու միջոց: Բացառությամբ վերջին նշվածի՝ սրանք համահունչ են պրոբացիայի ընդունված չափանիշներին, նպատակային նշանակությանն ու դերակատարմանը: Սակայն ինչպես ցույց են տալիս հետագա կարգավորումները, դեռևս առկա են օրենսդրական բացեր, որոնք կարող են խաթարել ծառայության արդյունավետ գործունեությունը:

Չնայած այն հանգամանքին, որ օրենքով հնարավորություն է տրված պրոբացիան կիրառելու քրեական արդարադատության բոլոր փուլերում՝ ըստ այդմ նախատեսելով նաև լայն գործառույթներ, դրանք դեռևս կյանքի չեն կոչվել համակարգային և համալիր օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով: Օրինակ՝ այլընտրանքային խափանման միջոցները չեն կիրառվում՝ պայմանավորված գործող քրեադատավարական օրենսդ-

րության կարգավորումների բացով: Նույն մտահոգությունը վերաբերելի է նաև Օրենքով Պրոբացիային տրված անվտանգության միջոցների կիրառմանը, քանի որ գործող քրեական օրենսգիրքը նման կարգավորումներ չի նախատեսում:

Ուսումնասիրությունը վեր է հանում նաև որոշ մտահոգություններ պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում Պրոբացիայի ծառայության դերակատարման կարգավորումների ամօրհնամբ: Խոսքը հատկապես վերաբերում է այս գործընթացում էական դերակատարում ունեցող զեկույցները կազմելուն ու ներկայացնելուն, որի լիազորությունն օրենքով տրվել է բոլոր ծառայողներին՝ առանց որոշակի չափանիշների ու պահանջների:

Դեռևս խիստ մտահոգիչ է օրենքով սահմանված, սակայն կյանքի չկոչված Էլեկտրոնային վերահսկողության ու հաշտարարության հարցը: Էլեկտրոնային վերահսկողության պարագայում ներկայիս կարգավորումների ուսումնասիրությունը վեր է հանում մի կողմից կիրառմանն ամօրհն թերություններ, մյուս կողմից՝ կրկին քրեադատավարական օրենսգրքի բացեր:

Հաշտարարության օրենսդրական կարգավորումներն առավել մտահոգիչ են այն պատճառով, որ մի կողմից գործող քրեական օրենսդրությամբ հաշտարարությունը սահմանված չէ, մյուս կողմից քրեական օրենսգրքի փոփոխությունների նախագծով նախատեսված հաշտության ինստիտուտը համահունչ չէ պրոբացիայի օրենքի համապատասխան կարգավորումներին:

Վերոնշյալը թույլ է տալիս արձանագրել, որ պրոբացիան ՀՀ-ում ներդնելուց հետո չեն կատարվել համակարգային և համահունչ օրենսդրական փոփոխություններ, որոնք կապահովեին օրենքով նախատեսված բոլոր գործառույթների իրականացումը: Այսինքն՝ չնայած այն ընդունվեց վերականգնողական արդարադատության հղացքի (կոնցեպտի) շրջանակներում, սակայն օրենսդրությունն ու համակարգը դեռևս դրան ուղղված գործուն քայլեր չեն կատարել, ինչն իր բացասական ազդեցությունն ունի Պրոբացիայի ծառայության արդյունավետ գործունեության վրա:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պրոբացիայի ծառայության համար նախատեսել իրենց կողմից կատարված ծառայության վերաբերյալ հանրությանը բովանդակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն:
- Գործուն և անհապաղ քայլեր ձեռնարկել օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման ու անվտանգության միջոցների պրակտիկ կիրառելիությունն ապահովելու համար՝ քրեական և քրեադատավարական օրենսդրությունում համապատասխան փոփոխությունները կյանքի կոչելու միջոցով:
- Քրեադատավարական ոլորտի համալիր և համաձայնեցված օրենսդրական փոփոխությունների միջոցով ապահովել էլեկտրոնային հսկողության միջոցի կիրառումը:
- Օրենքով արդեն իսկ ընդունված հաշտարարության ինստիտուտի կարգավորումները համապատասխանեցնել քրեական օրենսգրքի նախագծի փոփոխություններին:
- Օրենքով հստակեցնել հաշտարարին ներկայացվող պահանջները:
- Պրոբացիայի օրենքով հստակեցնել ծառայության ներսում առանձին ծառայողների ու բաժինների դերակատարումն ու իրավասությունները վերասոցիալականացման գործում:

- Պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում ներկայացվող զեկույցները կազմելու համար նախատեսել համապատասխան կարողություններով ու հմտություններով օժտված ծառայողների առանձին բաժին:
- Օրենքով հստակեցնել հետպատժյա փուլում պրոբացիայի ծառայության կիրառումը՝ նախատեսելով այդ փուլում միջոցների ընտրության ու կիրառման կարգը, չափանիշներն ու եղանակները:
- Պրոբացիայի ծառայությանն օրենքով վերապահված մի շարք լիազորությունների առավել արդյունավետ իրագործման համար ծառայության ներսում ստեղծել առանձին հիմնադրամ, որը արդյունավետ համագործակցության և համակարգման շնորհիվ հանցագործություն կատարած անձանց աշխատանքի ու զբաղվածության, կրթության ու այլ ծրագրերի մասնակցության հնարավորություններ կտա:
- Օրենսդրական կարգավորում տալ Պրոբացիայի ծառայության ֆինանսավորման հարցին, բյուջեի կազմման և հատկացման հարցում ծառայությանը տալ ուղղակի մասնակցության հնարավորություն ինչպես Արդարադատության նախարարություն-Ազգային ժողով, այնպես էլ Կառավարություն-Ազգային ժողով հարաբերություններում:
- Օրենքով հստակեցնել ծառայության նկատմամբ դատախազական հսկողության սահմաններն ու կարգը:

ABSTRACT

This research is aimed at studying the legislative framework by which the probation service in the Republic of Armenia is regulated, with the goal of identifying those gaps and shortcomings that hinder the effective functioning of the service. It also proposes priority directions for reforms, and, based on the obtained results, records the main factors hampering the service.

The research also addresses certain regulatory concerns regarding the role of probation service in the processes of non-compliance with conditional sentencing, parole, and e-control and mediation. All these processes are defined by law but have not yet brought into existence, among other issues. This allows us to record that since probation was introduced in Armenia, no systemic and relevant legislative changes have been made in the field of probation in order to provide an opportunity for ensuring the implementation of the complete functional set provided by law.

This work is relevant and important, as, among other issues, it refers to the advanced experience of individual countries in the field, in addition to providing a number of suggestions aimed at the improvement of the probation sector in the Republic of Armenia and its systemic reforms.

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն ուսումնասիրությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի հետազոտությանը՝ նպատակ ունենալով վեր հանելու ծառայության արդյունավետ գործունեությունը խաթարող բացերը և թերությունները, ստացված արդյունքների հիման վրա արձանագրելու ծառայությունը խոչընդոտող հիմնական գործոնները և առաջարկելու առաջնահերթ բարեփոխումների ուղղություններ:

Ուսումնասիրությունը ներկայացնում է նաև որոշ մտահոգություններ պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում Պրոբացիայի ծառայության դերակատարման կարգավորումների, օրենքով սահմանված, սակայն կյանքի չկոչված էլեկտրոնային վերահսկողության ու հաշտարարության, այլ առկա խնդիրների վերաբերյալ, որը թույլ է տալիս արձանագրել, որ պրոբացիան ՀՀ-ում ներդնելուց ի վեր ոլորտում համակարգային և համապատասխան օրենսդրական փոփոխություններ չեն կատարվել, ինչը հնարավորություն կստեղծեր ապահովելու օրենքով նախատեսված բոլոր գործառնությունների կատարումը:

Աշխատանքը հետաքրքիր և կարևոր է, քանի որ, ի թիվս այլ խնդիրների, անդրադառնում է առանձին երկրների՝ ոլորտի առաջադեմ փորձին, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ոլորտի բարելավմանը և համակարգային բարեփոխմանն ուղղված առաջարկություններ:

Publications under the 'EPF University' headline

- Relations Without Interactions. (2020)
<https://epfarmeria.am/document/Relations-without-Interactions>
- Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020)
<https://epfarmeria.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
- Armenia and The Region (in Armenian). (2019)
https://epfarmeria.am/hy/document/Armenia_and_the_Region
- Publishing Guide (in Armenian, with English abstracts). (2019)
<https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian, with English abstracts). (2019)
<https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019)
<https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018)
<https://epfarmeria.am/document/MSTA-Creative-Game>
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018)
<https://epfarmeria.am/document/OAS-Highlights-CELoG-2018>
- Culture, Literature and Art. (2018)
<https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian, with English abstracts). (2018)
<https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>

«ԵՅՅ համալսարան» խորագրի ներքո պատրաստված այլ հրապարակումներ

- Զարաբերություններ առանց շփումների, 2020,
<https://epfarmeria.am/hy/document/Relations-without-Interactions>
- Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Զայաստանը (անգլերեն), 2020.
<https://epfarmeria.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
- Զայաստանը և տարածաշրջանը, 2019,
https://epfarmeria.am/hy/document/Armenia_and_the_Region
- Զրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019,
<https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019,
<https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
- Զննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառումներ, 2019,
<https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
- Զամակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018,
<https://epfarmeria.am/hy/document/MSTA-Creative-Game>
- Զասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018,
<https://epfarmeria.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018>
- ԵՅՅ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018,
<https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Զանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017,
<https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>



This publication has been produced by Helsinki Association within the project Partnership for Justice Reform implemented together with Eurasia Partnership Foundation and Human Rights Power NGO. The contents of this publication are the sole responsibility of Helsinki Association and can in no way be taken to reflect the views of Eurasia Partnership Foundation and Human Rights Power NGO.

The probation service in the Republic of Armenia. The legislative bases and main challenges of the activity. Part 1/ Hasmik Harutyunyan
Helsinki Association, 2020.— 61 pages



This publication is a part of the series of manuals published under the “EPF University” heading. This publication is a part of Civil Society (CS) direction. The series include texts which belong to four large thematic directions:

Critical Thinking (CT)

War and Peace (WP)

Civil Society (CS)

Education, methodology of history, culture and values (EMHCV)

